



**ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԻՔՐԻԴԱՅԻՆ ՁԵՎԱԶԱՓՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԵՎ  
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) «Հիբրիդային ձևաչափով ուսումնական գործընթացի և ուսանողների գիտելիքների ատեստավորման մասին» կանոնակարգով սահմանվում է Համալսարանում համավարակի պայմաններում ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները:

2. 2020-2021 ուստարվա աշնանային կիսամյակում Համալսարանի բոլոր ֆակուլտետների բակալավրիատի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով ուսուցման 1-ին կուրսերում դասերը կազմակերպվում է սեպտեմբերի 1-ից 14-ը՝ առկա կրթության ձևաչափով, սեպտեմբերի 15-ից հետո հիբրիդային (հեռավար և առկա ուսուցման համակցմամբ) կրթության ձևաչափով:

2-րդ և բարձր կուրսերում կրթությունը կազմակերպվում է սեպտեմբերի 15-ից՝ հիբրիդային կրթության ձևաչափով (հեռավար և առկա ուսուցման համակցմամբ):

Դասերի և դասամիջոցների տևողությունը սահմանվում է ըստ դասացուցակի:

3. Համալսարանում առկա դասընթացները կազմակերպվում են՝

ա) հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման մեթոդական ուղեցույցի համաձայն (հավելված 1).

բ) Համալսարանում գործող առկա դասավանդման կանոններով, սույն կանոնակարգով նախատեսված առանձնահատկությունների հաշվառմամբ.

գ) ուսումնական տարվա սեպտեմբերի 15-ից սկսած 1-ից 3-րդ կուրսերում հիբրիդային ուսուցման համար կենտ համարով խմբերի դասերը համարիչ շաբաթվա

ընթացքում կազմակերպվում են առկա ուսուցմամբ և զույգ համարներով խմբերի դեպքում՝ առցանց ձևաչափով, իսկ հայտարար շաբաթվա ընթացքում՝ հակառակը (ըստ դասացուցակի)։

դ) 1-ից 3-րդ կուրսերի ուսումնական պլանով նախատեսված դասախոսությունները վերախմբավորվում են և նյութ(եր)ը վերադասավորվում են այնպես, որ դրանք խմբի դասախոսի կողմից գործնական պարապմունքների ընթացքում դասավանդվեն ուսանողներին՝ սահմանելով դասախոսությունների թիվը կիսամյակի համար 4 կամ 8՝ ըստ թեմատիկ պլանի։

ե) Ցիկլային ձևաչափով դասավանդվող առարկաների ուսումնական գործընթացը կազմակերպվում է հիմնականում առկա՝ առցանց ձևաչափի ներգրավմամբ, սույն կանոնակարգի 4-րդ կետի «է» ենթակետի համաձայն։

4. Դասավանդման առցանց բաղադրիչն իրականացվում է հետևյալ կանոններով՝

ա) դասընթացը կազմակերպվում է էլեկտրոնային առցանց «ZOOM» հարթակում։

բ) Դասախոսները և ուսանողները պետք է ապահովեն անխափան և որակյալ ինտերնետային կապ, որի հնարավոր խափանման դեպքում, որպես պահուստային միջոց, պետք է ունենան առնվազը 3G հեռախոսային ինտերնետային կապ։

գ) Ամբիոնների դասախոսներու համակարգիչներում և (կամ) պլանշետներում պետք է ներբեռնի նշված ծրագիրը zoom.us կայքից։

դ) Ուսանողները հարթակում պետք է գրանցված լինեն իրենց խմբի համարներով, անուն, ազգանուններով, ներկա լինեն միացրած տեսախցիկով, որը կարող են անջատել միայն դասախոսի թույլտվությամբ։ Նախորդող և հաջորդող 40 րոպե դասերի միջև սահմանվում է 3-ից 5 րոպե ընդմիջում՝ դասը վերսկսելու նպատակով։

ե) «ZOOM» հարթակում բոլոր դասախոսների նույնականացման (ID) համարները և գաղտնաբառերը ամբիոնի վարիչը պետք է ներկայացնի համապատասխան դեկանատ՝ ոչ ուշ քան մինչև 29.08.2020 թվականը։

զ) Համապատասխան ֆակուլտետի դեկանատները ամբիոններին են տրամադրում ուսանողների (խմբի ավագների կամ ամբողջ խմբի) տվյալները։ Դասախոսը պետք է ապահովի իր և խմբի միջև կապը։

է) Ցիկլային ձևաչափով դասավանդվող կուրսերում առցանց դասավանդման օրերի քանակը սահմանվում է ցիկլային դասընթացի տևողության մինչև 50 տոկոսը։

Առցանց դասերի օրերը նախապես սահմանվում են ամբիոնների կողմից և ներկայացվում դեկանատ:

5. Հիբրիդային դասերին ուսանողի մասնակցությունն ամրագրվում է էլեկտրոնային պատճենահանման (Screen Shot) միջոցով և խմբի մատյանում գրավոր նշումներով:

6. Առանձին դեպքերում դասացուցակով նախատեսված դասաժամին բժշկական գործունեությամբ զբաղվածություն ունեցող կլինիկական ամբիոնների դասախոսները կարող են դասը տեղափոխել օրվա երկրորդ կես՝ ուսանողների հետ համաձայնեցված և նախօրոք ամրագրված ժամին՝ այդ մասին տեղեկացնելով դեկանատին:

7. Բոլոր կուրսերի առցանց պարապմունքների ընթացքում, ելնելով առարկայի առանձնահատկություններից, պարտադիր է մասնագիտական տեսաֆիլմերի, անիմացիաների, թեմատիկ նկարների, մորֆոլոգիական պրեպարատների կիրառումը, հիվանդության պատմագրերի, իրավիճակային խնդիրների, դեպքերի ներկայացումը և վերլուծությունը:

8. Ուսանողների բացակայությունների հաշվառումն ու վերահսկումը կարգավորվում է Համալսարանում առկա գործող համապատասխան կանոններով:

### **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ**

9. Ուսանողների գիտելիքների ատեստավորումը բոլոր կուրսերում և բոլոր առարկաներից իրականացվում է առկա ստուգարքի ձևով՝ 3 հարց պարունակող առնվազն 30 տոմսերի միջոցով, բացառությամբ սույն կանոնակարգի 10-րդ կետում նշված առարկաների: Ստուգարքային գործընթացն իրականացվում է ամբողջ խմբի ներկայությամբ:

Ստուգարքային տոմսի ընտրությունն ուսանողի կողմից իրականացվում է վիճակահանության սկզբունքով: Ուսանողը հարցերին պատասխանում է անմիջապես: Հարցաշարը ուսանողներին պետք է տրամադրվի դասերի մեկնարկին: Ատեստավորման գործընթացի պատասխանատուն ամբիոնի վարիչն է և (կամ) ամբիոնի ուսումնական պատասխանատուն:

1-ից 3-րդ կուրսերի ըստ կրթական ծրագրերի ստուգարքային առարկաների  
ատեստավորումները իրականացվելու են Համալսարանում սահմանված  
ստուգարքային շրջանում, իսկ քննական առարկաների ստուգարքային  
ատեստավորումները՝ քննաշրջանում:

10. Ելնելով ուսանողներին գեղչերի տրամադրումն ապահովելու պահանջներից և  
շարունակական առարկաների՝ տվյալ կիսամյակում ավարտվելու հանգամանքից,  
կազմակերպել (թույլատրելի փոքր խմբերով՝ պահպանելով հակահամաճարակային  
կանոնները) համակարգչային և գրավոր (օտարերկրացի ուսանողներ) քննություններ  
հետևյալ առարկաներից.

ա) Ընդհանուր բժշկության և Ռեզիմբժշկական ֆակուլտետներ՝

- առաջին կուրս՝ «Նորմալ անատոմիա»,
- երկրորդ կուրս՝ «Հյուսվածաբանություն»,
- երրորդ կուրս՝ «Մանրէաբանություն», «Տեղագրական անատոմիա և օպերատիվ

վիրաբուժություն»,

բ) Ստոմատոլոգիական ֆակուլտետ՝

- առաջին կուրս՝ «Նորմալ անատոմիա»,
- երկրորդ կուրս՝ «Հյուսվածաբանություն»,
- երրորդ կուրս՝ «Մանրէաբանություն»,

գ) Դեղագիտական ֆակուլտետ՝

- առաջին կուրս՝ «Ընդհանուր քիմիա»,
- երկրորդ կուրս՝ «Օրգանական քիմիա», «Ֆիզիոլոգիա՝ անատոմիայի հիմունք-

ներով»,

- երրորդ կուրս՝ «Ախտաբանություն»,

• մագիստրատուրայի առաջին կուրս՝ «Բժշկական և դեղագործական ապրանքա-  
գիտություն»,

դ) Հանրային առողջության ֆակուլտետ՝

- մագիստրատուրայի առաջին կուրս՝ «Առողջապահության կառավարման

հիմունքներ»:

11. Հասարակագիտական, հայոց և օտար լեզուներ առարկաների դեպքում  
ուսանողները ատեստավորվում են 2-3 դրական պատասխանի (շաբաթական 1 մուտքի

դեպքում՝ 3, երկու շաբաթվա ընթացքում 1 մուտքի դեպքում՝ 2 պատասխանի) հիման վրա: Անհրաժեշտ թվով դրական պատասխանների բացակայության դեպքում ուսանողը կիսամյակի վերջին դասի օրը ատեստավորվում է դասախոսի կողմից իրեն տրվող հարցերին դրական պատասխաններ տալու հիման վրա: Բացասական արդյունքի դեպքում առարկան կատեստավորվի մարման շրջաններում՝ նույն կերպ:

12. Բանակից նոր գորացրված ուսանողները սովորելու և ատեստավորվելու են համապատասխան կուրսի ուսումնառության և ատեստավորման սկզբունքներով՝ օգտագործելով ատեստավորման իրենց վերապահված բոլոր հնարավորությունները:

13. Ակադեմիական պարտքերի և առարկայական տարբերությունների, ինչպես նաև մինչև 12 կրեդիտ կազմող առարկայական պարտքերի վճարովի դասընթացները կազմակերպվում են հիբրիդային տարբերակով՝ ատեստավորումն իրականացնելով ըստ ռեկտորի կողմից սահմանվող ժամանակացույցի:

14. Դասավանդման, ատեստավորման կազմակերպման և վերահսկման գործընթացի պատասխանատուն ամբիոնի վարիչն է:

15. Հիբրիդային ձևաչափով ուսումնառությանը մասնակցել չցանկացող ուսանողները կարող են ժամանակավորապես դադարեցնել իրենց կրթական գործընթացը՝ շարունակելով այն հետագա ուստարիներին, վերսկսելով ուսուցումը այն դադարեցնելու պահից, պահպանելով ներկայիս ուսման վճարի չափը: Այս դեպքում ուսանողները Համալսարանի [info@ysmu.am](mailto:info@ysmu.am) էլեկտրոնային հասցեով կարող են ներկայացնել ռեկտորին ուղղված համապատասխան դիմում:

16. Սույն կանոնակարգով չսահմանված և սույն կանոնակարգին առնչվող հարցերը կարգավորվում են Համալսարանի մանդատային հանձնաժողովի որոշումներով:

\*\*\*